«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ
ԱՌԱՐԿԱ	ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ՀԵՂԻՆԱԿ	ԼԻԼԻԿՄՈՒՐԱԴՅԱՆ
ՄԱՐԶ	ԱՐՄԱՎԻՐ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	«ԱՐՇԱԼՈՒՅՍԻ Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. Համագործակցային ուսուցում 5

1.1. Համագործակցային ուսուցման մոտեցումները և սկզբունքները 5

1.2. Համագործակցային մեթոդները և հնարները 8

1.3. Համագործակցային ուսուցման առավելությունները 10

Գլուխ 2. Համագործակցային դասի պլանավորում 11

2.1. Համագործակցային դասի պլանների կազմելու սկզբունքները և սխեման 11

Գլուխ 3. Սեփական հետազոտությունների և արդյունքների վերլուծություն ...13

3.1. «Պատասխանատվություն» թեմայով ստեղծված համագործակցային դասի պլան 13

3.2. «Պատասխանատվություն» համագործակցային դասի կազմակերպման առաջադրանքներ 15

3.3. Դասի հաջողված և չհաջողված կողմերի գնահատում 18

3.4. Դասի քննարկման վերլուծություն 19

Եզրակացություններ և առաջարկություններ 20

Օգտագործված գրականության ցանկ 21

Ներածություն

Հետազոտության արդիականությունը: Հասարակության ակտիվ զարգացման կարևոր նախադրյալ են հանդիսանում գիտելիքների և լայնածավալ տեղեկատվության անդադար շրջապտույտը: Նման արագընթաց փոփոխությունների ազդեցության առաջնային թիրախներից է կրթական համակարգը, որի կարևոր առաքելություններից է սովորողների մոտ զարգացնել մտավոր ու զգայական կարողություններ, ինքնուրույնություն, սոցիալականացում, նոր իրավիճակներին հարմարվելու և աշխատելու ճկունություն՝ նպաստելով հասարակության ապագայի բարեհաջող կերտմանը: Սովորողների մոտ նման հմտությունների ձևավորմանը կարող է նպաստել համագործակցային մեթոդների կիրառումը:

Հետազոտության նպատակը: Աշխատանքի նպատակն է զարգացնել հասարակագիտության դասերի ընթացքում սովորողների խմբային աշխատելու ունակությունները համագործակցային ուսուցման մեթոդների կիրառմամբ:

Հետազոտության խնդիրները: Դրված նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Մշակել համագործակցային դաս պլանավորելու մեթոդական սկզբունքները «Հասարակագիտություն»առարկայի համար:
2. Ստեղծել «Պատասխանատվություն» թեմայի ուսուցման համագործակցային դասի պլան:
3. Կազմակերպել այդ պլանով դասեր հասարակագիտության ժամերին:
4. Անցկացնել քննարկումներ դասի մասնակից սովորողների հետ:

5. Գնահատել դասի պլանի հաջողված և չհաջողված կողմերը:
6. Ներկայացնել եզրակացություններ և առաջարկություններ:

Հետազոտության մեթոդները: «Հասարակագիտություն» առարկայից համագործակցային դասի պլան մշակելու, դրանով դասեր կազմակերպելու և քննարկումներ անցկացնելու միջոցով կատարելագործել դասի պլանը և սովորողների մոտ զարգացնել համագործակցային աշխատելու հմտությունները:

1. Գրականությանուսումնասիրություն,
2. համագործակցային դասի պլանավորում,
3. խմբային աշխատանք:

Հետազոտության գիտական և/կամ կիրառական նշանակությունը: Համագործակցային մեթոդների օգտագործմամբ սովորողների մոտ կձևավորվեն կրթության ժամանակակից պահանջներին համապատասխան որակներ և հմտություններ, որոնք կիրառելի կլինեն իրենց հետագա կյանքում:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Հետազոտությունը բաղկացած է ներածությունից, 3 գլխից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից: Ընդհանուր ծավալը՝ 21 համարակալված էջ:

Գլուխ 1. Համագործակցային ուսուցում

Երբեմն սովորողներն առավել արդյունավետ ձեռք են բերում գիտելիք միմյանցից, քան ուսուցիչներից: Դասապրոցեսում սովորողների՝ միմյանցից սովորելու հնարավորությունը զարգացնելու համար կիրառվում է փոքր խմբային աշխատանքը, որը երբեմն պայմանականորեն անվանում են համագործակցային ուսուցում, համատեղ գործունեության վրա հիմնված ուսուցում կամ սոցիալական ուսուցում (Պուրուկուրու, 2006): Համագործակցային ուսուցումն ապահովում է քննադատական մտածողություն, գիտակցական ըմբռնում, ուսուցանված նյութի երկարատև պահպանում, ինչպես նաև ընձեռում է հնարավորություններ բազմաբնույթ կրթական նպատակներին հասնալու համար, ինչպիսիք են ակադեմիական հասկացությունների, սկզբունքների և իրադարձությունների ընկալումը, միջանձնային հմտությունների զարգացումը (Սահակյան, 2020):

1.1. Համագործակցային ուսուցման մոտեցումները և սկզբունքները

Համագործակցել նշանակում է աշխատել միասին՝ ընդհանուր նպատակին հասնելու համար: Սա ժողովրդավար հասարակության քաղաքացու ամենակարևոր հմտություններից է: Համագործակցային ուսումնառությունն օգնում է ուսուցանվող նյութի ավելի լավ յուրացմանը, զարգացնում ուսուցման նկատմամբ դիրքորոշումները և սովորեցնում երեխաներին լինել միասնական:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու համագործակցային ուսուցման էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման, արժևորման համար, ինչպես նաև բարելավում է խմբային աշխատանքը (Սահակյան, 2020):

Համագործակցային ուսումնառության հիմնական մոտեցումները հայտնի են տարբեր անվանումներով՝ խմբային աշխատանք, համատեղ ուսուցում, աշակերտների թիմային ուսուցում: Նշված մոտեցումներն ունեն մի շարք ընդհանրություններ՝

- փոքր խմբային ուսուցումն իրականացվում է 3-5 հոգանոց խմբերով,
- խմբային ուսուցման արդյունքում առաջանում է խմբի անդամների դրական փոխկախվածություն և վստահություն,
- աշակերտը կրում է անհատական պատասխանատվություն, իրականացնում դերեր, կատարում առաջադրանքներ:

Խմբային ուսուցման մոտեցումների միջև կան նաև որոշակի տարբերություններ՝

- խմբերի կազմավորում (օրինակ՝ համասեռ կամ տարասեռ խմբերի ձևավորում՝ կախված սովորողների հմտություններից, հետաքրքրություններից, դերերի բաշխումից),
- ուսուցչի դերի սահմանում, որը կարող է տարբերվել խմբային ուսուցման տարբեր փուլերում և տարբեր հանձնարարությունների ժամանակ

(օրինակ՝ ուսուցիչը կարող է լինել գնահատող,աջակցող կամ խորհրդատու),

- գնահատում (անհատական, զույգային կամ խմբային գնահատում, ինքնագնահատում) (Խաչատրյան և այլք,2005):

Համագործակցային ուսումնառության հաջող ընթացք ապահովելու համար ուսուցիչները պետք է ատանձնեն ուղղորդողի դերը: Խմբում հաջող համագործակցություն ապահովելու համար ուսուցիչը պետք է հետևի **համագործակցային ուսումնառության սկզբունքներին,** որոնցից են խմբերի բաժանման սկզբունքը, հաղորդակցման հմտությունների ուսուցանում, հակամարտության կառավարում, աշխատանքի խթանումու գնահատում:

<u>Խմբերի բաժանման սկզբունք:</u> Աշակերտներին համագործակցային ուսումնառության խմբերի բաժանելիս,առաջին հերթին,պետք է հաշվի առնել խմբի անդամների թիվը: Ըստ Ռոբերտ Սլեյվիինի, չորսը համագործակցային ուսումնառության լավագույն թիվն է: Առավելագույն արդյունքի հասնելու համար պետք է համակցել ունակության տարբեր մակարդակներ, խմբում ներառել և՛ աղջիներ, և՛ տղաներ՝ ապահովելով խմբի բազմազանությունը: Խմբերի կազմումը միայն սկիզբն է,Հաջորդ քայլը խմբում համապատասխան վարվելակերպի ուսուցանումն է:

<u>Հաղորդակցման հմտությունների ուսուցանում:</u> Հստակ հաղորդակցությունը համագործակցային ուսումնառության համատեքստի անբաժանելի բաղադրիչներից է: Աշակերտները պետք է սովորեն հնարավորինս պարզ և որոշակի արտահայտել իրենց մտքերն ու զգացմունքները: Ուսուցիչը պետք է աշակերտներին խորհուրդ տա՝

- սեփական բառերով վերաշարադրել խոսողի ասածը՝ առանց ընդօրինակելու խոսողի արտահայտչամիջոցներնուշարադրանքը,
- խոսքը սկսել՝ ասելով «Դու կարծում ես ...»կամ «Դու գտնում ես, որ ...», որպեսզի բոլորը հասկանան, որ նախորդ աշակերտի միտքն է վերաշարադրվում,
- խուսափել մյուս աշակերտների ասածը հավանության արժանացնելուց կամ դատապարտելուց,
- ոչ խոսքային հաղորդակցման միջոցների օգնությամբ ցույց տալ մյուսների գաղափարներն ըմբռնելու պատրաստակամություն,
- հնարավոր ճշգրտությամբ ներկայացնել խոսողի ասածնու զգացմունքները,
- կարեկցել խոսողին,խոսողի զգացմունքները կիսելու միջոցով փորձել հասկանալ հաղորդվող տեղեկատվությունը:

<u>Հակամարտության կառավարում:</u> Խմբային աշխատանքի հաջորդ կարևոր սկզբունքը հակամարտության կառավարումն է, որտեղ շատ կարևոր է հումտուսուցչիդերը: Երբեմն օգտակար է կողմերի շրջափոխումը, երբ աշակերտները վիճաբանության ընթացքում ցայտնոտի մեջ են ընկնում: Ուսուցիչը պետք է հանձնարարի սովորողներին հակառակորդի տեսակետը պաշտպանելու դերը, ինչը կարող է օգնել ընդհանուր հայտարարի գալ :

<u>Աշխատանքի խթանում ու գնահատում:</u> Խմբային աշխատանքի ժամանակ կարևոր է նաև խմբերի խրախուսումն ու գնահատումը: Պետք է մշակել գնահատման մասնակցային մեխանիզմներ,կիրառել ինքնագնահատման և փոխադարձ գնահատման մեթոդներ (Խաչատրյան և այլք,2005):

1.2. Համագործակցային մեթոդները և հնարները

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք կիրառվում են դասի տարբեր փուլերում: Այդ ընթացքում աշակերտները ներքաշվում են մի գործընթացի մեջ, որտեղ նրանք կիսվում են գաղափարներով, փոխանակում են տեղեկատվություն, կատարում են ընտրություն և կայացնում են որոշումներ: Դասի կազմակերպման ժամանակ ուսուցչի հիմնական աշխատանքն է բոլոր խմբերի աշխատանքների վերահսկումն ու ուղղորդումը (Սահակյան, 2020):

Համագործակցային մեթոդներն են՝ աշակերտների թիմային առաջադիմություն, խճանկար, շրջագայություն պատկերասրահում, շրջվիր դեպի զույգդ, պրիզմա, խմբային հետազոտություն, և այլն (Պուրուկուրու, 2006):

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս ստեղծական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այն խթանում է աշակերտների ուսումնառությունը, մասնավորապես՝ ցածր առաջադիմությամբ աշակերտների, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛

առանձին աշակերտների, և՛ խմբերին: **Խճանկարը մեթոդը** մշակվել և փորձարկվել է Տեխասի համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից,այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Ըստ այս մեթոդի, աշակերտներին կարելի է բաժանել չորս կամ հինգ անդամ ունեցող տարասեռ խմբերի: Յուրաքանչյուր խմբին տալ դասի մեկ հատված և աշխատելու համար որոշակի ժամանակ: Այն լրանալուց հետո խմբերը ներկայացնում են իրենց հատվածը՝ կարդում են, քննարկում, կատարում: Յուրաքանչյուր խումբ սովորում է դասի մեկ հատվածը,բայց արդյունքում սովորում են ամբողջ դասը՝ դադարեցնելով աշխատանքը և ուշադիր լսելով բոլոր խմբերի պատասխանները: **Շրջագայություն պատկերասրահում** մեթոդը խճանկարի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ,ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ (Ափոյան,2014):

Ցանկացած դաս և դասարան եզակի է, ուստի ուսուցչի վարպետության ցուցանիշներից մեկը նպատակին համապատասխան մեթոդի ընտրությունն է: Ուսուցիչը միանգամից,մի դասի ժամանակ չի կարող օգտագործել մեթոդների հարուստ զինանոցը: Նա պետք է որոշակի դասի համար կատարի ուսուցման մեթոդի,հնարի ընտրություն: Ուսուցման մեթոդի հիմքում ընկած են այն խնդիրները,որոնք լուծվում են դասի ժամանակ կամ դասի որոշակի փուլում.բացի դասի նպատակից ու խնդիրներից, մեթոդների ընտրությունը կախված է նաև՝

- դասի տիպից ու կառուցվածքից,
- ուսումնական նյութի բովանդակությունից,
- աշակերտների տարիքից,
- դասարանում աշակերտների թվաքանակից,
- պատրաստվածության մակարդակից,
- շահագրգռվածությունից ու հետաքրքրությունից,
- ուսումնադիտողական պարագաների առկայությունից,
- ժամաքանակից,
- ուսուցչի պատրաստվածության մակարդակից և այլ գործոններից (Արնաուդյան և այլք, 2004):

1.3. Համագործակցային ուսուցման առավելությունները

Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել: Համագործակցային ուսուցման մեջ էական են ոչ միայն ակադեմիական գիտելիքներ և հմտություններ սովորելը, այլև կարևոր է խմբային զարգացման մշակման միջոցով դառնալ հմուտ համագործակցողներ (համագործակցային հմտություններ) և գիտելիքների ակտիվ կիրառողներ (մտածողության հմտություններ): Համագործակցային ուսուցման իմաստն է՝

- յուրաքանչյուր անհատի դարձնել ուժեղ անձնավորություն ժամանակակից հասարակության մեջ,
- անհատին դարձնել ակտիվ և կարողունակ խմբի անդամ և համագործակցելու (Հովհաննիսյան և այլք, 2006):

Ոչ բոլոր խմբային աշխատանքներն են, որ կարող են ապահովել համագործակցային ուսուցում: Առաջադրանքը, մեթոդը պլանավորվում և իրականացվում է այնպես, որ սովորողին մղի համագործակցության և նպաստի նրա ակտիվ մասնակցությանը ուսուցման պրոցեսին: Փոքր խմբերով աշխատանքն էապես մեծացնում է աշակերտի ակտիվությունը դասապրոցեսում: Փոքր խմբերով ուսուցումը կարևորվում է նաև այն առումով, որ դասարաններում աշակերտների խտության մեծացման արդյունքում զգալիորեն դժվարանում է ուսուցման ֆրոնտալ անհատական հարցման ձևերի կիրառումը: Երբ ուսուցիչն աշխատում է դասարան (մեծ) խմբի հետ, ապա աշակերտները արտահայտվելու, քննարկելու

ավելի քիչ հնարավորություններ են ունենում (Սահակյան, 2020):

Գլուխ 2. Համագործակցային դասի պլանավորում

Ճիշտ կազմակերպված համագործակցային աշխատանքի արդյունքում սովորողների մոտ ձևավորվում է դրական վերաբերմունք ուսման նկատմամբ, հաղթահարվում են դժվարությունները, ինչպես նաև խթանվում է ստեղծագործական մտածողությունը: Նման արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել համագործակցային դասի գրագետ պլանավորում:

2.1. Համագործակցային դասի պլանների կազմելու սկզբունքները և սխեման

Համագործակցային ուսուցումն իրականանում է համագործակցային դասի միջոցով: Համագործակցային դասը մի գործընթաց է, որը հիմնականում կազմված է տրամաբանորեն իրար հաջորդող վարժություններից: Համագործակցային ուսուցում կազմակերպելու համար ուսուցիչը պետք է.

1. դասապլանը կառուցի այնպես, որ սովորողները համագործակցելու կարիք ունենան,
2. ուսումնական նյութը և ուսուցման մեթոդները համապատասխանեցնի կոնկրետ առարկայի և դասարանի կարիքներին,
3. միջամտի առանձին աշակերտների միջև առաջացող խնդիրներին, կոնֆլիկտներին՝ կանխելով հնարավոր ճախողումները,
4. հաշվի առնի սովորողների խմբային և անհատական պատասխանատվությունը (Գյուլազյան և այլք, 2009):

Նկար 1-ում ներկայացված է համագործակցային դասի կազմակերպման սխեման: Աշխատանքը փոքր խմբերով կազմակերպելու համար դասը անհրաժեշտ է սկսել ուսուցչի ելույթով, որը ներկայացնում

է դասավանդման նյութը: Այնուհետև ուսուցիչն աշակերտներին բաժանում է 3-6 հոգուց բաղկացած ենթախմբերի ու հանձնարարում քննարկել իր պատմածը և բերել մի քանի համապատասխան օրինակներ: 3-5 րոպե խմբում աշխատելուց հետո ուսուցիչը կազմակերպում է համախմբային քննարկում: Յուրաքանչյուր խմբից մեկը բոլորիններկայացնում է իրենց օրինակները,իսկ մյուս ենթախմբերն արտահայտում են իրենց կարծիքը: Այդ քննարկման ավարտից հետո ուսուցիչը ենթախմբերին բաժանում է քարտեր, որոնցում շարադրված են ուսումնասիրվող թեմայի տեքստից որոշակի պարբերություններ: Կրկին տրամադրվում է 3-5 րոպե՝ պարբերությունները կարդալու,յուրացնելու և օրինակներ բերելու համար: Այնուհետև համախմբային քննարկմանը նորից սովորողներից մեկը ներկայացնում է ենթախմբի կատարած աշխատանքը, իսկ մյուսներն արտահայտում են իրենց կարծիքները: Դասավարտին ուսուցիչը կազմակերպում է դասի վերլուծություն, և սովորողները քննարկում են դասի հաջողված և չհաջողված դրվագները, մեկնաբանում իրենց քայլերը (Մանուկյան և այլք,2002):



Նկար 1. Համագործակցային դասի կազմակերպման սխեման

Գլուխ 3. Սեփական հետազոտությունների և արդյունքների վերլուծություն

Հասարակագիտության ուսուցման գործընթացում շատ կարևոր է փոքր խմբերով աշխատելը, ինչն աշակերտներին հնարավորություն է տալիս համատեղ քննարկել որոշ հիմնահարցեր, զարգացնել հաղորդակցական, թիմով աշխատելու հմտություններ, սովորել միմյանցից: Այս որակները ժողովրդավարական հասարակության հիմնաքարերն են, որոնց ձևավորումը պետք է սկսել հենց դասարանում (Ղազինայան և այլք, 2013):

3.1. «Պատասխանատվություն» թեմայով ստեղծված համագործակցային դասի պլան

Դասարան՝ 8-րդ
Առարկա՝ Հասարակագիտություն
Աշակերտների թվաքանակը դասարանում՝ 20
Թեմա՝ Պատասխանատվություն

<u>Դասի պլանը հաջորդական քայլերով</u>

1. Աշակերտներին ներկայացնել դասավանդման նյութը:
2. Աշակերտներին հրահանգել կազմել 4 հոգուց բաղկացած խմբեր: Տվյալ պարագայում դասարանում ձևավորվում է 5 աշխատանքային խումբ:
3. Խմբերին բաժանել ուսումնասիրման ենթակա նյութերը Գյուլբուդաղյան և այլք (2013) դասագրքից.
   - ✓ Պատասխանատվության արժեքն ու անհրաժեշտությունը (էջ 90-91)
   - ✓ Պատասխանատվության աղբյուրները: Խոստում, հանձնարարում, նշանակում, աշխատանքի բնույթ (էջ 91-92)

- ✓ Պատասխանատվության աղբյուրները՝ Օրենքներ, սովորույթներ, քաղաքացիություն, բարոյական սկզբունքներ (էջ 92-93)
- ✓ Մրցակցող պարտականություններ, արժեքներ և հետաքրքրություններ (էջ 93-94)
- ✓ Ընթերցանության նյութ (էջ 95-97)

4. Դասի անդրադարձն իրականացնել «խճանկար» և «շրջագայություն պատկերասրահում» մեթոդներով: Այս մեթոդների կիրառումը նպատակահարմար է, քանի որ յուրաքանչյուր խումբ սովորում է դասի մեկ հատվածը, բայց արդյունքում սովորում են ամբողջ դասը՝ դադարեցնելով աշխատանքը և ուշադիր լսելով բոլոր խմբերի պատասխանները: Աշակերտները սովորում են փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

4.1. Յուրաքանչյուր խումբ կատարում է իրեն տրված ենթաթեմայի ուսումնասիրումը: Տրվում է աշխատանքի կատարման ժամանակ հանձնարարված հատվածն ուսումնասիրելու, քննարկելու, մտքեր փոխանակելու համար:

4.2. Իրականացնել համախմբային քննարկում: Խմբի աշխատանքը կներկայացնի ուսուցչի կողմից ընտրված աշակերտը, ինչը հնարավորություն է տալիս խմբի բոլոր աշակերտներին պատրաստ լինել:

5. Խմբերը կգնահատվեն ըստ իրենց նախընտրած ներկայացման ձևի (բացատրություն, գծապատկեր, սխեմա, աղյուսակ և այլն) և առաջադրանք-հարցաթերթիկի արդյունքների: Ինչպես նաև

կիրականացվի աշակերտների կողմից ինքնագնահատում:

3.2. «Պատասխանատվություն» համագործակցային դասի կազմակերպման առաջադրանքներ

Աշակերտների կողմից նյութի յուրացվածությունը կստուգվի ուսուցչի կողմից կազմված 5 հարց ներառող առաջադրանք-հարցաթերթիկով (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. «Պատասխանատվություն» համագործակցային դասի առաջադրանք-հարցաթերթիկի նմուշ օրինակ

Դասարան՝ 8-րդ **Թեմա՝ Պատասխանատվություն**	
Առաջադրանք	**Պատասխան**
1. Տալ «պատասխանատվություն» հասկացության ձևակերպումը:	_____
2. Լրացնել պարտականություններ ի ցուցակը:	**Դեր** / **Պարտականություն** Ընտանիքի անդամ Աշակերտ Ընկեր Քաղաքացի
3. Ինչպե՞ս կարելի է ընտրություն կատարելիս գործակցող պարտականությունների, արժեքների և շահերի միջև:	_____
4. Համապատասխանեցնել պնդումները պատասխանատվության աղբյուրներին	**1.** Հանձնարարում / ա) Յուրաքանչյուր մասնագետ պատասխանատու է իր աշխատանքի համար **2.** Օրենքներ / բ) Պաշտոնի ստանձնում

	3.Քաղաքացիություն	գ)Վարքագծի կանոններ՝ հիմնված ճշտի և սխալի մասին դատողություններ ի վրա
	4.Խոստում	դ)Ուսուցիչը հանձնարարում է կատարել առաջադրանքը
	5. Սովորություններ	ե) Պատասխանատվություն որոշակի շրջանակներ սահմանող փատաթղթեր
	6.Նշանակում	զ)Ընտրության մասնակցելու պարտականություն
	7.Բարոյական սկզբունքներ	է)Վերցված ապրանքի/գումարի պայմանավորված ժամանակին վերադարձում
	8.Աշխատանքի բնույթ	ը)Դասընկերոջի շնորհավորել ծննդյան օրվա կապակցությամբ
	————————————————	
5.Թվարկել պատասխանատվությունը իրականացնելիս առաջացող հնարավոր բախումները	——	

Առաջադրանքի արդյունքները կբացահայտեն նաև խմբերի անդամներից յուրաքանչյուրի համագործակցային աշխատանքը և ներկայացման

որակը, ինչի հիման վրա կկատարվի խմբի կամ անհատների գնահատում:

Ինքնագնահատում: Խմբային աշխատանքում աշակերտների անհատական ներդրումը գնահատելու համար, սովորողներին կտրվի նաև լրացուցիչ հարցաթերթիկ (աղյուսակ 2): Յուրաքանչյուր մասնակից գրում կամնշում է իր ակտիվությունը, գործունեությունն ու ներդրումը: Գնահատման այս ձևը թույլ է տալիս որոշելու յուրաքանչյուր սովորողի դերը և գործառույթները խմբային աշխատանքում:

Աղյուսակ 2. Խմբային աշխատանքի գնահատման հարցաթերթիկ

Մասնակցի անունը _____ **Ամսաթիվ** _____					
	Միշտ	Հաճախ	Երբեմն	Հազվադեպ	Երբեք
Մասնակցություն խմբային աշխատանքին					
Մասնակցություն պլանավորման աշխատանքին					
Աջակցություն ուրիշներին					
Մասնակցություն որոշումների ընդունմանը					
Մասնակցություն արձանագրմանը և կազմակերպմանը					
Մասնակցություն խմբային քննարկումներն					
Մասնակցություն տեղեկատվության ամփոփագրմանը					
Մասնակցություն աշխատանքի արդյունքների ամփոփագրմանը					
Մասնակցություն տեղեկատվության ներկայացման նախապատրաստմանը					

3.3. Դասի հաջողված և չհաջողված կողմերի գնահատում

Դասի հաջողված և չհաջողված կողմերի գնահատումն իրականացնելու համար աշակերտներին կտրվի լրացնել աղյուսակ 3-ում ներկայացված գնահատման թերթիկը:

Աղյուսակ 3. «Պատասխանատվություն» թեմայով դասի հաջողված և չհաջողված կողմերի գնահատման թերթիկի նմուշ օրինակ:

1.Որքանո՞վ էր հետաքրքիր ձեզ համար այս թեման *	1 2 3 4 5
2.Որքանով էր այն ձեզ համար հետշտ*	1 2 3 4 5
3. Ի՞նչ եք կարծում, կկիրառե՞ք արդյոք այս գիտելիքները ձեր կյանքում	ա)այո բ) մասամբ գ)ոչ
4. Ինչպե՞ս կգնահատեք այս թեմայի ցստացած գիտելիքները*	1 2 3 4 5
5. Ի՞նչ եք կարծում, թեման օգնե՞ց ձեզ և ձեր դասընկերներին բացահայտելու, թե դուք որքանո՞վ եք պատասխանատու:	ա)այո բ) մասամբ գ)ոչ

**գնահատականը ընդգծելիս նկատի ունենալ, որ ամենաբարձրը 5-ն է:*

3.4. Դասի քննարկման վերլուծություն

8-րդ դասարանում, որտեղ սովորում են 20 աշակերտ, «Պատասխանատվություն» թեման ուսումնասիրելիս առաջադրանքների և ակտիվության հիման վրա ստացված գնահատականների արդյունքները ներկայացված են նկար 2-ում: Դասի ընթացքում բոլոր աշակերտները ցուցաբերել են բավականին բարձր ակտիվություն և հանձնարարությունները կատարել են մեծ ոգևորությամբ: Դասարանի 7 աշակերտ ստացել է 9 միավոր, 5 աշակերտ՝ 8 միավոր, 4 աշակերտ՝ 7 միավոր, 2 աշակերտ՝ 6 միավոր և 1-ական աշակերտներ՝ 5 և 4 միավորներ: Այսպիսով, բարձր գնահատականներ ստացել են աշակերտների գերակշռող մասը, իսկ նվազագույն միավորներ՝ ընդհամենը 10 %-ը: Առաջադիմությունը կազմել է 100 %, որակական ցուցանիշը՝ 80 %:



Նկար 2. 8-րդ դասարանում «Պատասխանատվություն» համագործակցային դասի ժամանակ աշակերտների ստացած գնահատականները:

Համաձայն աշակերտների կողմից լրացված դասի հաջողված և չհաջողված կողմերի գնահատման թերթիկի՝ դասը կարելի է համարել հաջողված:

Եզրակացություններ և առաջարկություններ

Ամփոփելով «Համագործակցային ուսուցման մեթոդների կիրառումը հասարակագիտության դասերին» թեմայով հետազոտական աշխատանքը՝ եկանք հետևյալ եզրահանգման՝

1. Հասարակագիտության դասերի կառուցումը համագործակցային ուսուցման մեթոդներով բավականին արդյունավետ է:
2. Դիտվել է դասապրոցեսին աշակերտների ընդգրկվածության բարձր մակարդակ:
3. Սովորողների մոտ համագործակցային մեթոդների կիրառման շնորհիվ դիտվել են և՛ առաջադիմության, և՛ որակական ցուցանիշների բարձր արդյունքներ:
4. Սովորողների մոտ զարգացել են խմբային աշխատելու ունակություններ և հմտություններ:
5. Ըստ աշակերտների լրացրած գնահատման թերթիկի,դասը համարվել է հաջողված:
6. Անհրաժեշտ է հետագայում իրականացնել նաև այլ դասերի կառուցում համագործակցային ուսուցման մեթոդներով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ. Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար: Երևան: Կրթության ազգային ինստիտուտի հրատարակչություն: 2004: 178 էջ:
2. Ափոյան Ա. Համագործակցային ուսուցումը տարրական դասարաններում. Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի գիտական տեղեկագիր /դասավանդման մեթոդիկա: №1: 2014: 336-345:
3. Գյուլազյան Վ., Առուշանյան Լ., Գասպարյան Մ. Ուսուցչի ուղեցույց տետր /օրվա դասի պլան: Երևան: «Զանգակ»: 2009: 26 էջ:
4. Գյուլբուդաղյան Ա., Հարությունյան Կ., Թովմասյան Տ. Հասարակագիտություն 8-րդ դասարան /Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար: Երևան: «Զանգակ»: 2013: 141 էջ:
5. Խաչատրյան Ս., Պետրոսյան Ս., Հակոբյան Ս., Խախամյան Մ., Տեր-Մկրտչյան Թ., Ավանեսյան Վ. Ուսուցչի ձեռնարկ / Քաղաքացիական կրթություն. Ժողովրդավարության հիմնարար արժեքներ: Երևան: 2005: 159 էջ:
6. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ. Համագործակցային ուսուցում / Ձեռնարկ: Երևան:«Անտարես»:2006: 122 էջ:
7. Ղազինյան Գ., Խաչատրյան Ս., Վաղարշյան Ա., Պետրոսյան Ս.Հասարակագիտություն /Ուսուցչի ձեռնարկ 8-9-րդ դասարաններ: Երևան: «Տիգրան Մեծ»: 2013: 95 էջ:
8. Մանուկյան Գ.,Պապիկյան Ա.,Պարսամյան Վ.Մարդու իրավունքներ / Ձեռնարկ ուսուցչի համար: Վանաձոր: «Արմինֆո»: 2002: 103 էջ:

9. Պուրուկուրու Վ. Համագործակցային ուսուցում / Վերապատրաստողի ուղեցույց: Երևան:«Անտարես»:2006:95էջ:
10. Սահակյան Վ. Համագործակցային ուսուցման, համագործակցային մեթոդների, հնարների կիրառման արդյունավետ հմտությունների ձեվավորումը պատմության դասերին.Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի գիտական տեղեկագիր /Դասավանդման մեթոդիկա: №1: 2020: 275-286: